European Commission against Racism and Intolerance
Commission européenne contre le racisme et l'intolérance

CRI(98)30
Version arménienne
Armenian version

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով

ECRI-ի ընդհանուր քաղաքական հանձնարարական n 4

Պոտենցիալ զոհերի կողմից խտրականության և ռասիզմի փորձառության և ընկալման վերաբերյալ ազգային հարցումներ

Ընդունվել է 1998 թ. մարտի 6-ին

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Secretariat of ECRI
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F - 67075 STRASBOURG Cedex
Tel.: +33 (0) 3 88 41 29 64
Fax: +33 (0) 3 88 41 39 87
E-mail: combat.racism@coe.int

Այցելեք ձեր վեբ սայթը . www.ecri.coe.int

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների 1993 թ. հոկտեմբերի 8-ից 9-ը Վիեննայում տեղի ունեցած գագաթնաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարների ընդունած Հռչակագրին,

Հիշեցնելով, որ այդ Հռչակագրի շրջանակներում սահմանված ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի գործողությունների ծրագիրը կոչ է անում Նախարարների կոմիտեին ստեղծել Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, որը լիազորված լինի մասնավորապես անդամ պետություններին ուղղված ընդհանուր քաղաքական բնույթի հանձնարարականներ մշակել,

Անդրադառնալով նաև 1997 թ. հոկտեմբերի 10-ից 11-ը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ու կառավարությունների ղեկավարների Ստրասբուրգում տեղի ունեցած երկրորդ գագաթնաժողովի ընթացքում ընդունված Եզրափակիչ հռչակագրին և Գործողությունների պլանին,

Ընդգծելով, որ այդ Եզրափակիչ հռչակագիրը հաստատում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների՝ ավելի ազատ, հանդուրժողական և արդարացի եվրոպական հասարակություն ստեղծելու նպատակը, միաժամանակ կոչ անելով ուժեղացնել պայքարը ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ,

Հիշեցնելով, որ իր n 1 ընդհանուր քաղաքական հանձնարարականում ECRI-ն անդամ պետությունների կառավարություններին կոչ է անում անհրաժեշտության դեպքում տվյալների և անձնական կյանքի պաշտպանության եվրոպական օրենքներին, նորմատիվ ակտերին և հանձնարարականներին համապատասխան հավաքել այն տվյալները, որոնք թույլ կտան գնահատել բնակչության առավել խոցելի խմբերի վիճակը և փորձառությունը ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության ոլորտներում,

Ընդգծելով, որ ռասիստական և խտրական բնույթի գործողությունների և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում փոքրամասնական խմբերի վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալներն անհրաժեշտ են հիմնախնդիրների վերհանման և համապատասխան քաղաքականության մշակման համար,

Համոզված, որ այս բնույթի վիճակագրական տվյալները պետք է լրացվեն վերաբերմունքների, կարծիքների և ընկալումների համաձայն,

Ընդունելով, որ հասարակության լայն խավերի շրջանում իրականացրած հարցումներից բացի, տեղեկատվության նոր և արժանահավատ աղբյուր կարող են հանդիսանալ այն հարցումները, որոնք նպատակ ունեն պարզել պոտենցիալ զոհերի կողմից խտրականության և ռասիզմի փորձառությունը և ընկալումը,

Համարելով, որ այս տիպի հարցումների արդյունքները տարբեր ձևերով կարող են օգտագործվել՝ վեր հանելու համար որոշ հիմնախնդիրներ և բարելավելու իրավիճակը,

Համարելով նաև, որ պոտենցիալ զոհերի փորձառության և ընկալման արժանահավատության ընդունումը կարևոր խորհուրդ ունի թե ամբողջ ազգաբնակչության և թե հենց խոցելի խմբերի համար,

Գոհունակություն արտահայտելով այն կապակցությամբ, որ այս տիպի հարցումներ արդեն կազմակերպվել են որոշ անդամ պետություններում,

Նշելով, որ այս տիպի հարցումների կազմակերպումը Եվրոպայում ավելի ճշգրիտ գաղափար կտա թե ներպետական և թե համաեվրոպական մասշտաբով ռասիզմի և խտրականության իրավիճակի մասին,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին, առաջնորդվելով սույն հանձնարարականի հավելվածում զետեղված գլխավոր ուղղություններով, միջոցներ ձեռք առնել ապահովելու համար պոտենցիալ զոհերի կողմից խտրականության և ռասիզմի փորձառության և ընկալման վերաբերյալ ներպետական հարցումների կազմակերպումը :

ECRI-ի ընդհանուր քաղաքական n 4 հանձնարարականի

հավելված

Պոտենցիալ զոհերի կողմից խտրականության և ռասիզմի փորձառության և ընկալման վերաբերյալ հարցումների կազմակերպման գլխավոր ուղղությունները

I. Այս տիպի հարցումների հիմնական նպատակները

1. Սույն հանձնարարականում նշված հարցման նպատակն է գաղափար կազմել այն մասին, թե ռասիզմի և անհանդուրժողականության հիմնախնդիրներն ինչպես են ընկալվում նրանց կողմից, ովքեր հանդիսանում են դրանց ներկա կամ պոտենցիալ զոհերը : Այս նորարար մոտեցումը ենթադրում է հարցումներ իրականացնել բնակչության տարբեր խմբերի շրջանում, որոնք հնարավոր է, որ ենթարկվեն ռասիստական, օտարատյաց, հակասեմիտական կամ անհանդուրժողական գործողությունների : Հարցումների նպատակն է տեղեկատվություն ստանալ ռասիզմի և խտրականության բնագավառում նրանց փորձառության վերաբերյալ, ինչպես նաև պարզել, թե ինչ ձևով են նրանք ընկալում այս առումով այն հասարակության տարբեր կողմերը, որում ապրում են : Այսպիսով հավաքված տվյալներն առնչվում են խոցելի խմբերի ընկալմանն ու փորձառությանը : Դրանք կարող են լրացնել և հարստացնել ռասիստական իրադարձություններին վերաբերող և տարբեր բնագավառներում լայնածավալ խտրականության մասին ավելի մեծաթիվ տվյալները, ինչպես նաև բնակչության մեծամասնական տարրի՝ փոքրամասնական խմբերի և ռասիզմի ու անհանդուրժողակաության հարցերի վերաբերյալ կարծիքների և վերաբերմունքի մասին տվյալները :

II. Հարցումների գործնական կազմակերպումը

2. Այս տիպի հարցումների մշակումը և ընթացքը կարելի է հանձնարարել հետազոտողների կամ ինստիտուտների, որոնք որոշակի փորձ ունեն ռասիզմի և անհանդուրժողականության խնդիրներում, իսկ ինչ վերաբերում է տեղերում աշխատանքին, ապա այն կարող են իրականացնել հարցումներով զբաղվող մարմինները :

3. Հարցման ենթակա խմբերին կարելի է ընտրել տվյալ երկրի առանձնահատկություններից ելնելով, օրինակ՝ ներգաղթյալներ, ազգային փոքրամասնություններ և/կամ այլ խոցելի խմբեր :

4. Այս կամ այն խմբին հարցման ենթարկելիս որպես գործոն պետք է հաշվի առնել խմբի թվաքանակը և տարածված խտրականության վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկությունները (օրինակ, գործազրկության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, տեղեկություններ խտրականության դեմ բողոքների վերաբերյալ) :

5. Համեմատություն կատարելու տեսակետից նպատակահարմար կլինի նաև ընդգրկել այսպես կոչված »կոնտրաստային« կամ »վերահսկիչ« խմբեր. օրինակ, որևէ փոքրամասնական խումբ, որն ըստ ամենայնի խտրական կամ ռասիստական բնույթի լուրջ խնդիրների չի բախվում, կարող է ընդգրկվել հարցման մեջ :

6. Կարևոր ժողովրդագրական վիճակագրական տվյալներ, որոնք այնպիսի տեղեկություններ են տալիս, ինչպես՝ ծննդյան վայրը, էթնիկական ծագումը, կրոնը, մայրենի լեզուն, քաղաքացիությունը, և այլն, դյուրացնում են այս տիպի հարցումները : Եթե նման տվյալներ չեն կարող տրամադրվել, ապա պետք է գտնել համապատասխան անձանց ինքնությունը վեր հանող և բնորոշող այլ միջոցներ :

7. Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ ռասիզմի և անհանդուրժողականության տեսակետից այս հարցումների ընթացքում երբեմն կարող է վտանգավոր լինել որոշ հատկապես ռիսկային խմբերի, օրինակ՝ անօրինական ներգաղթյալների հետ շփման մեջ մտնելը :

III. Հարցման մշակումը

8. Բացի սոցիալ-տնտեսական և այլ փաստացի խնդիրների մասին հարցերից, հարցումը կարող է նաև ներառել հետևյալ խոշոր կատեգորիաներին վերաբերող հարցեր.

- կոնկրետ իրավիճակներին վերաբերող հարցեր, ինչպես ասենք, հարաբերություններն իշխանության տարբեր մարմինների հետ (օրինակ, ոստիկանություն, առողջապահական ծառայություններ, սոցիալական ծառայություններ, դպրոցական հաստատություններ), ինչպես նաև այլ մարմինների (օրինակ, բանկեր, անշարժ գույքի գործակալություններ) և հաստատությունների հետ (օրինակ, աշխատավայր (գործատուներ), ռեստորաններ, ժամանցի վայրեր, խանութներ) : Հարցերը կարող են լինել՝ քանի անգամ, որտեղ, որոշակի ժամանակահատվածի կտրվածքով (օրինակ, անցյալ տարի կամ վերջին հինգ տարիներին) հարցման ենթարկված անձինք որևէ փոքրամասնական խմբի պատկանելու պատճառով անարդարացի վերաբերմունքի են արժանացել, նշելով, թե կոնկրետ ինչ անարդարացի վերաբերմունք մասին է խոսքը :

- հարցեր՝ հասարակության կյանքին իրավահավասար ձևով մասնակցություն ունենալու հնարավորությունների ընկալման վերաբերյալ, ուշադրության հրավիրումը փոքրամասնական խմբերի վիճակը բարելավելուն միտված հատուկ միջոցառումների վրա և թե ինչ չափով են այդ հնարավորություններն իրականացել (օրինակ, ուսումնական առաջադիմության, մասնագիտական ուսուցման և աշխատանքի տեղավորման հնարավորություններ) :

- ընկալմանը և գործելակերպերին վերաբերող հարցեր. նշված թեմաները հարկ եղած դեպքում կարող են ներառել՝ հաստատությունների նկատմամբ վստահության աստիճանը, վերաբերմունքը ներգաղթի կամ փոքրամասնությունների վերաբերյալ քաղաքականությանը, երկրի գնահատումը որպես ռասիստական կամ օտարատյաց երկիր, կրոնի հետ կապված հիմնահարցերը, այլ խմբերի նկատմամբ վերաբերմունքը, հիմնական (մեծամասնական) բնակչության հետ շփման մեջ մտնելու դժվարությունները, ինքն իրեն հյուրընկալող երկրի կամ ծագման երկրի մաս կազմելու զգացումը, նոր վայրում հաստատվելու կամ ծագման երկիր վերադառնալու ծրագրեր, այն վայրը, ուր հարցվող անձն իրեն ամենից շատ է »իր տանն« զգում, և այլն : Այս տիպի թեմաների ներառումը թույլ է տալիս հետաքրքիր

հարաբերություններ վեր հանել փորձարկվող խտրականության աստիճանի և հարցված անձանց տարբեր ընկալումների և վերաբերմունքների միջև :

9. Հարկ է նշել, որ այս տիպի հարցերը հիմնականում խտրականության սուբյեկտիվ ընկալման տվյալներ են հաղորդում : Սակայն ամեն դեպքում չափազանց դժվար է օբյեկտիվորեն և »իրական պայմաններում« քննարկել խտրական վերաբերմունքի դրսևորումներ, քանի որ դրանք կարող են ի հայտ գալ ամենօրյա կյանքի ցանկացած պահի : Խտրականության սուբյեկտիվ ընկալման տվյալները արժանահավատ են հատկապես, երբ դրանք զուգակցվում են այլ տիպի տեղեկատվությամբ, ինչպես օրինակ՝ գործազրկության, դատվածության, դատարան ներկայացված հայցերի մասին և այլ վիճակագրական տվյալներով :

IV. Հարցումների մոնիտորինգը

10. Հարցման իրականացումից որոշ ժամանակ անց կարելի է մոնիտորինգ կազմակերպել՝ պարզելու համար ժամանակի ընթացքում խտրականության և ռասիզմի երևույթների կրած փոփոխությունները, ինչպես նաև նոր, այլ խմբեր ներգրավելու համար :

11. Հարցման արդյունքները տարբեր ձևով կարող են օգտագործվել, օրինակ՝ ցույց տալու համար այն բնագավառները, որտեղ հատկապես անհրաժեշտ է միջամտել, գնահատելու և մշակելու համար համապատասխան խմբերի փորձը և մտահոգությունը հաշվի առնող քաղաքականություն, հասարակության լայն խավերի ուշադրությունը հրավիրելու և նրան ավելի ըմբռնելի դարձնելու խտրականության հիմնախնդիրներն այնպես, ինչպես դրանք ընկալվում են զոհերի կողմից, իրենց գործելակերպի և հաստատությունների նկատմամբ փոքրամասնական խմբերի ընկալումները ներկայացնելով՝ դրանց վրա բևեռելու որոշակի ոլորտներում աշխատող անձանց ուշադրությունը (օրինակ՝ ոստիկանություն, գործատուներ, ծառայությունների ոլորտի աշխատողներ, և այլն) :